ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» օգոստոսի 2023 թվականի N **618**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, «ՍՏԵՓ ԳՐԻՆՏՈՒՐ» ՍՊԸ-ԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՄԻԼԻՈՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 39/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-007-0084-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ (ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

1. **Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.**

«ՍՏԵՓ ԳՐԻՆՏՈՒՐ» ՍՊԸ-ին հողամասի կառուցապատման իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15112012-06-0255 վկայականի) ք. Ստեփանավան, Միլիոնի փողոց թիվ 39/1 հասցեում գտնվող, 06-007-0084-0005 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առկա են կառույցներ՝ պարիսպ շուրջ 50.5 մ. երկարությամբ և փակ տաղավար՝ շուրջ 130.0 քմ մակերեսով, որոնց շինարարության իրականացման վերաբերյալ Ստեփանավանի համայնքապետարանը թույլտվություն չի տրամադրել:Վերը նշված փակ տաղավարը և պարիսպը կառուցված չեն ըստ հատկացված հողամասի գործառնական նշանակության (հիմք՝ Ստեփանավան համայնքի քաղաքապետի 01.11.2012թ.-ի թիվ 309 որոշում), չունեն քաղաքաշինական փաստաթղթեր և համապատասխան թույլտվություններ: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի «բ» կետի՝ Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի ընթացքում անցկացվել են լսումներ՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով

սահմանված կարգավորումները: «ՍՏԵՓ ԳՐԻՆՏՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն Սարգիս Ղարաքեշիշյանը պատշաճ ծանուցվել էր վարչական վարութի լսման մասին, սակայն վերջինս վարչական վարույթի լսմանը չի ներկայացել: Սարգիս Ղարաքեշիշյանը 02.08.2023թ.-ին փոստային առաքմամբ ուղարկվել է 02.08.2023թ.-ին կազմված «Վարչական վարույթի մասին» ծանուցումը, 01.08.2023թ.-ին կազմված արձանագրությունը և ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 267-րդ հոդվածի քաղվածքը, ով վերը նշված փաստաթղթերը ստացել է 04.08.2023թ.-ին:

2. **Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

ա. ք. Ստեփանավան, Միլիոնի փողոց թիվ 39/1 հասցեում գտնվող, 06-007-0084-0005 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առկա են կառույցներ՝ պարիսպ շուրջ 50.5 մ. երկարությամբ և փակ տաղավար՝ շուրջ 130.0 քմ մակերեսով, որոնց շինարարության իրականացման վերաբերյալ Ստեփանավանի համայնքապետարանը թույլտվություն չի տրամադրել: Վերը նշված փակ տաղավարը և պարիսպը կառուցված չեն ըստ հատկացված հողամասի գործառնական նշանակության (հիմք՝ Ստեփանավան համայնքի քաղաքապետի 01.11.2012թ.-ի թիվ 309 որոշում), չունեն քաղաքաշինական փաստաթղթեր և համապատասխան թույլտվություններ, հետևաբար դրանք դիտարկվում են որպես ինքնակամ կառույցներ և ենթակա են քանդման (ապամոնտաժման):

բ.վերոնշյալ ինքնակամ կառույցներով փաստացի ծանրաբեռնված է Ստեփանավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27092012-06-0265 վկայական), ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանցով ծանրաբեռնված ինքնակամ շինություններից:

3. **Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.**

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը,

շինությունը կամ այլ կառույցը, իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը: Վերը նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝ ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է

համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանները:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքներն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական

ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 8-րդ կետերը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման պահանջները ***որոշում եմ***

1. Չօրինականացնել ք. Ստեփանավան, Միլիոնի փողոց թիվ 39/1 հասցեի հողամասում առկա առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի «ՍՏԵՓ ԳՐԻՆՏՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից կառուցված ինքնակամ կառույցները:
2. Հանձնարարել Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետին՝ «ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-ի օժանդակությամբ ապամոնտաժել ք. Ստեփանավան, Միլիոնի փողոց թիվ 39/1 հասցեի հողամասում առկա առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի «ՍՏԵՓ ԳՐԻՆՏՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից կառուցված ինքնակամ կառույցները:
3. Առաջարկել ՀՀ ՆԳՆ Լոռու մարզային վարչության պետին սույն որոշման 2-րդ կետի համաձայն Ստեփանավանի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի ապահովումը:

4. Հանձնարարել Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետին, սույն որոշման 2-րդ կետով նախատեսված հարկադրանքի միջոցներ կիրառելու դեպքում ք. Ստեփանավան, Միլիոնի փողոց թիվ 39/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինության քանդման ու դրան զուգորդող աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել սույն որոշման 2-րդ կետով նշված սուբյեկտից:
5. Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
7. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ստեփանավանի համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» օգոստոսի 2023 թվականի N **619**

«ՍՏԵՓ ԳՐԻՆՏՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. **Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.**

Քննության առնելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 01.03.2023թ.-ի թիվ 40/1 կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 01.08.2023թ.-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը պարզեցի որ, «ՍՏԵՓ ԳՐԻՆՏՈՒՐ» ՍՊԸ-ին հողամասի կառուցապատման իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15112012-06-0255 վկայականի) ք. Ստեփանավան, Միլիոնի փողոց թիվ 39/1 հասցեում գտնվող, 06-007-0084-0005 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առկա են կառույցներ՝ պարիսպ շուրջ 50.5 մ. երկարությամբ և փակ տաղավար՝ շուրջ 130.0 քմ մակերեսով, որոնց շինարարության իրականացման վերաբերյալ Ստեփանավանի համայնքապետարանը թույլտվություն չի տրամադրել: Վերը նշված փակ տաղավարը և պարիսպը կառուցված չեն ըստ հատկացված հողամասի գործառնական նշանակության (հիմք՝ Ստեփանավան համայնքի քաղաքապետի 01.11.2012թ.-ի թիվ 309 որոշում), չունեն քաղաքաշինական փաստաթղթեր և համապատասխան թույլտվություններ: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի «բ» կետի՝ Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի ընթացքում անցկացվել են լսումներ՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումները: «ՍՏԵՓ ԳՐԻՆՏՈՒՐ» ՍՊԸ-ի

տնօրեն Սարգիս Ղարաքեշիշյանը պատշաճ ծանուցվել էր վարչական վարույթի լսման մասին, սակայն վերջինս վարչական վարույթի լսմանը չի ներկայացել: Սարգիս Ղարաքեշիշյանը 02.08.2023թ.-ին փոստային առաքմամբ ուղարկվել է 02.08.2023թ.-ին կազմված «Վարչական վարույթի մասին» ծանուցումը, 01.08.2023թ.-ին կազմված արձանագրությունը և ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 267-րդ հոդվածի քաղվածքը, ով վերը նշված փաստաթղթերը ստացել է 04.08.2023թ.-ին:

2. **Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝ ք. Ստեփանավան, Միլիոնի փողոց թիվ 39/1 հասցեում գտնվող, 06-007-0084-0005 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առկա են կառույցներ՝ պարիսպ շուրջ 50.5 մ. երկարությամբ և փակ տաղավար՝ շուրջ 130.0 քմ մակերեսով, որոնց շինարարության իրականացման վերաբերյալ Ստեփանավանի համայնքապետարանը թույլտվություն չի տրամադրել: Վերը նշված փակ տաղավարը և պարիսպը կառուցված չեն ըստ հատկացված հողամասի գործառնական նշանակության (հիմք՝ Ստեփանավան համայնքի քաղաքապետի 01.11.2012թ.-ի թիվ 309 որոշում), չունեն քաղաքաշինական փաստաթղթեր և համապատասխան թույլտվություններ, հետևաբար դրանք դիտարկվում են որպես ինքնակամ կառույցներ և ենթակա են քանդման (ապամոնտաժման):

Վերը նշված փաստի առթիվ Ստեփանավան համայնքի ղեկավարի 01.03.2023թ.-ի թիվ 40/1 կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 01.08.2023թ.-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

3. **Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.**

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման):

Համաձայն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ հարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Համաձայն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նաև սույն օրենսգրքի 114-րդ, 154-րդ, 154.1-րդ, 156.1-րդ, 169.1-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Համաձայն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը, 219.1-րդ, 281-րդ, 282-րդ, 305-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետը, 38-րդ 58-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 26-րդկետերը, ***որոշում եմ.***

1. «ՍՏԵՓ ԳՐԻՆՏՈՒՐ» ՍՊԸ-ին ի դեմս տնօրեն Սարգիս Ղարաքեշիշյանի ենթարկել վարչական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով նախատեսված զանցանքը կատարելու համար և նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինասների նախարարության գործառնական վարչության Ստեփանավանի համայնքապետարանի 900255101140 հաշվարկային հաշվին:
3. Սույն որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից կարող է վարչական կարգով բողոքարկվել Ստեփանավանի համայնքի ղեկավարին կամ դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» օգոստոսի 2023 թվականի N **620**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0310-0059 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0019 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հարություն Արամի Ջիլավյանի կողմից 07.08.2023թ ներկայացված թիվ Ջ-763 դիմումը, 07.08.2023թ. թիվ 07082023-06-0043 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագիծը, ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով՝ ***որոշում եմ***

1. Փոփոխված համարել՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան 06-007-0310-0059 կադաստրային ծածկագրով, Երիտասարդական փողոց թիվ 13/1 հասցեում գտնվող 0.0019 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» օգոստոսի 2023 թվականի N **621**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29.11.2022Թ. ՏՐՎԱԾ 12.06.1991Թ. ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՆ ՔԱՂՎԱԾՔԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի կողմից 29.11.2022թ. տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.06.1991թ. թիվ 4 որոշման քաղվածքը, N՝ Կ-26052023-06-0123 գույքի նկատմանբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ***որոշում եմ***՝

1. Անվավեր ճանաչել համայնքի ղեկավարի կողմից 29.11.2022թ. տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.06.1991թ. կայացրած թիվ 4 որոշումից տրված քաղվածքը և հիմք ընդունել համայնքի ղեկավարի 13.08.2023թ. տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.06.1991թ.կայացրած թիվ 4 որոշումից տրված քաղվածքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» օգոստոսի 2023 թվականի N **622**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0038-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0038-0004 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, Գ. Նժդեհի փողոց 6/10 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» օգոստոսի 2023 թվականի N **623**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ 44 ԱՆԱՍՆԱՇԵՆՔ ՀԱՍՑԵԻ, 06-007-0307-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Երիտասարդական փողոց 44 անասնաշենք հասցեի սեփականատեր Կարինե Պարույրի Շահբազյանի ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 44 անասնաշենք հասցեի, 06-007-0307-0015 կադաստրային ծածկագրի հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, նշված հողամասում ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 22.06.2023թ. N 22062023-06-0071 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված՝ 14.08.2023թ. թիվ 20235TSRYF ծածկագրով հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ `

որոշում եմ

1. Հաստատել մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 44 անասնաշենք հասցեի 06-007-0307-0015 կադաստրային ծածկագրում գտնվող հողամասի սահմանները և մակերեսը համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

2. Ստեփանավան քաղաքի 06-007-0307-0015 կադաստրային ծածկագրի 0.04478 հա հողամասի նկատմամբ ճանաչել Կարինե Պարույրի Շահբազյանի սեփականության իրավունքը:
3. Օրինականացնել մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 44 անասնաշենք հասցեի, Կարինե Պարույրի Շահբազյանի սեփականության իրավունքով պատկանող 06-007-0307-0015 կադաստրային ծածկագրում գտնվող 0.04478 հա ճշտված մակերեսով հողամասում 2010թ. ինքնակամ կառուցված՝ 51,98 քմ ներքին մակերեսով բնակելի տունը, 8,92 քմ ներքին մակերեսով սանհանգույցը և 2,06 քմ պարիսպը:
4. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 51,98 քմ ներքին մակերեսով բնակելի տան համար 86963/ութսունվեց հազար ինը հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ, 8,92 քմ ներքին մակերեսով սանհանգույցի համար 14924 /տասնչորս հազար ինը հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ և 2,06 քմ պարիսպի համար 3447 /երեք հազար չորս հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ: Ընդամենը վճարվելիք գումարը կազմում է105334 / հարյուրհինգ հազար երեք հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար նախատեսված գումարը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:
5. Վերը նշված անշարժ գույքին Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 44 անասնաշենք հասցեի փոխարեն տրամադրել նոր փոստային հասցե՝ Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 38 բնակելի տուն:
6. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» օգոստոսի 2023 թվականի N **624**

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԵՎՈՆ ՊԱՊՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լևոն Պապյանի 2023 թվականի օգոստոսի 16-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 27.12.2022թ. թիվ 130-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 106 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Լևոն Պապյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա երրորդ եռամսյակի համար՝ 01.07.2023-30.09.2023թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար ժ/պ Լ. Քալանթարյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման, առևտրի սպասարկման և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**